Հավելված 6
ՀԲԿ -- ԳՀԱՊՁԲ -- 20 / 0302* ծածկագրով
Գնանշման հարցման հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ « *ԴԵՂՈՐԱՅՔԻ ԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱԽՏՈՐՇԻՉ ՆՅՈՒԹԵՐԻ* »
ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԲԿ -- ԳՀԱՊՁԲ -- 20 / 0302-10

ք. Հրազդան «27» մայիսի 2020 թ.

,,ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ,, ՓԲԸ -ը ի դեմս տնօրենի Ժ/Պ ԱՐՄԵՆ ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ, որը գործում է_____-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և ,,ԼԻՆԱՐԵ,, ՍՊԸ_-ը, ի դեմս տնօրեն _____-ի, որը գործում է _____-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված

գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են __30___ օրից ավելի,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում **է 367900 (Երեք հարյուր վաթսունյոթ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ 0 դրամ ԱԱՀ-ն:**[17][29] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ

---

[17]Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս ,ներառյալ ԱԱՀ-նե բառերը հանվում են:

[18]Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:

տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք

---

[20] Եթե պայմանագիրը կնքվել է ,Գնումների մասինե ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[21] Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[22]

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[23]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

---

[22] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

[23] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

ց և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող
ավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված
աբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ
ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ
սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ
որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ
համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով
ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով
պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am
հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով
հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված
ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի
միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային
փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք
չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ
յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի
անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ	«ԼԻՆԱՐԵ» ՍՊԸ
ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ., Պուրակային 32	ք. Երևան, Նանսենի 7/43
Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ՝
220345140192000	Խորհրդային մ/ճ
03017721	Հ/Հ 163078039498
Տնօրենի Ժ/Պ	ՀՎՀՀ 09212215
Արմեն Հախվերդյան	Տնօրեն Ա. Շեգունց
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

29.09.2020

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 27 » մայիս 2020 թ. կնքված
ՀԲԿ -- ԳՀԱՊՁԲ -- 20 0302-10 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	Ենթակա քանակը	Ժամկետը***
25	33691162	Լաբորատոր ազդանյութեր և ռեագենտներ ԱՍԱՏ / եվրոպական արտադրության կամ համարժեք / 5 հատ x /5 x 100 /մլ		Ասպարտատամինատոր անսֆերալի որոշման թեստ հավաքածու Մեթոդ՝ կինետիկ: Ալիքի երկարությունը 340 նմ:Ֆորմատ 5 x 100 մլ Ստուգվող նմուշ՝արյան շիճուկ , պլազմա: պահպանման պայմանները ռեակտիվները 2-8°C Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի ½ առկայություն :Սերտիֆիկատ ISO 15189 և ISO 9001 Forin Vitro Diagnosticony*	հատ	10900	54500	5	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32		***Դեղորայքի և ախտորոշիչ նյութերի ձեռք բերումը Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 25.12.2020թ***
39	33141211	Միանվագ օգտագործման լաբորատոր		Միանվագ օգտագործման լաբորատոր պլաստիկ	Հատ	18	18000	1000	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային		***Դեղորայքի և ախտորոշիչ նյութերի ձեռք բերումը Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 25.12.2020թ***

		պլաստիկ պիպետներ 2-3 մլ-ng 1000 հատ		պիպետներ 2-3մլ-ng					32		
40	33691162	Լաբորատոր ազդանյութեր և ռեագենտներ Ալֆա- Ամիլազա որոշման թեսթ հավաքածու , / եվրոպական արտադրության կամ համարժեք/ 1 հատ x /5x10/ մլ		Ալֆա- Ամիլազի որոշման թեստ հավաքածու Մեթոդ՝ կոլորիմետրիկ Ալիքի երկարությունը 405 նմ:Ֆորմատ 5 x 10 մլ Ստուգվող նմուշ ՝արյան շիճուկ , պլազմա / մեզ: պահպանման պայմանները ռեակտիվները 2-8°C Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի ½ առկայություն: Սերտիֆիկատ ISO 15189 և ISO 9001 Forin Vitro Diagnosticony*	Հատ	19500	19500	1	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32		*Դեղորայքի և ախտորոշիչ նյութերի ձեռք բերումը Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 25.12.2020թ*
42	33211260	Անտիստրեպտոլիզին-O որոշման թեստ/ եվրոպական արտադրության կամ համարժեք/ 100 թեստ տուփ 6 հատ x 100 թեսթ		Անտիստրեպտոլիզին-O որոշման թեստ;Մեթոդ՝ լատեկս: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Ֆորմատ 100 թեստ տուփ	հատ	3900	23400	6	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32		*Դեղորայքի և ախտորոշիչ նյութերի ձեռք բերումը Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 25.12.2020թ*
45	33211190	Ցոլիկլոն Անտի A 10մլ (II խմբի արյան որոշման		Արյան խմբի որոշման թեստ-հավաքածու Ցոլիկլոն Անտի A : Մեթոդ	Հատ	720	10800	15	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32		*Դեղորայքի և ախտորոշիչ նյութերի ձեռք բերումը Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 25.12.2020թ*

		թեսթ) / եվրոպական արտադրության կամ համարժեք / 200 թեստանոց ֆլակոն 15 հատ x 200 թեսթ		ագլյուտինացիա:Ֆորմատ 10 մլ:Ստուգվող նմուշ: արյուն պահպանման պայմանները 2-8°C Սերտիֆիկատ ISO 15189 ISO 9001 Forin Vitro Diagnosticony*							
46	33211200	Ցոլիկլոն Անտի B 10մլ (III խմբիարյան որոշման թեսթ) / եվրոպական արտադրության կամ համարժեք/ 200 թեստանոց ֆլակոն 15 հատ x 200 թեսթ		Արյան խմբի որոշման թեստ-հավաքածու Ցոլիկլոն Անտի B: Մեթոդ ագլյուտինացիա:Ֆորմատ 10 մլ:Ստուգվող նմուշ: արյուն պահպանման պայմանները 2-8°C Սերտիֆիկատ ISO 15189 ISO 9001 Forin Vitro Diagnosticony*	Հատ	720	10800	15	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32		***Դեղորայքի և ախտորոշիչ նյութերի ձեռք բերումը Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ***
47	33691162	Լաբորատոր ազդանյութեր/ ռեագենտներ/ Ցոլիկլոն Անտի A B 10մլ / IV խմբիարյան որոշման թեսթ / եվրոպական արտադրության կամ համարժեք/ 200 թեստանոց ֆլակոն 15 հատ x 200		Արյան խմբի որոշման թեստ-հավաքածու Ցոլիկլոն Անտի AB: Մեթոդ ագլյուտինացիա:Ֆորմատ 5 մլ:Ստուգվող նմուշ: արյուն պահպանման պայմանները 2-8°C Սերտիֆիկատ ISO 15189 ISO 9001 Forin Vitro Diagnosticony*	Հատ	1100	16500	15	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32		***Դեղորայքի և ախտորոշիչ նյութերի ձեռք բերումը Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ***

		թեսթ									
48	33211220	Ցոլիկլոն Անտի D 10մլ / ռեզուս համակարգի անտիգենի որոշման թեսթ / եվրոպական արտադրության կամ համարժեք/ 200 թեստանոց ֆլակոն 20 հատ x 200 թեսթ		Արյան խմբի որոշման թեստ-հավաքածու Ցոլիկլոն Անտի D: Մեթոդ ագլյուտինացիա:Ֆորմատ 10մլ:Ստուգվող նմուշ: արյուն պահպանման պայմանները 2-8°C Սերտիֆիկատ ISO 15189 ISO 9001 Forin Vitro Diagnosticony*	հատ	1500	30000	20	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32		*Դեղորայքի և ախտորոշիչ նյութերի ձեռք բերումը Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 25.12.2020թ*
50	33211250	C– Ռեակտիվ սպիտակուց CRP //(որակական թեսթ հավաքածու) / եվրոպական արտադրության կամ համարժեք 100 թեսթանոց տուփ 16 հատ x 100 թեսթ		C– Ռեակտիվ սպիտակուցի որոշման թեստ հավաքածու CRP Մեթոդ՝ լատեքս ագլյուտինացիա : Ֆորմատ 100 թեստ Ստուգվող նմուշ ՝արյան շիճուկ ,: պահպանման պայմանները ռեակտիվները 2-8°C Սերտիֆիկատ և ISO 15189 Forin Vitro Diagnosticony*	Հատ	3900	62400	16	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32		*Դեղորայքի և ախտորոշիչ նյութերի ձեռք բերումը Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 25.12.2020թ*
64	33691162	Լաբորատոր ազդանյութեր և ռեագենտներ ԱԼԱՏ / եվրոպական արտադրության կամ համարժեք/		Ալանինամինատրանսֆերազի որոշման թեստ հավաքածու Մեթոդ՝ կինետիկ: Ալիքի երկարությունը 340 նմ:Ֆորմատ 5x100 մլ տուփ Ստուգվող նմուշ ՝արյան շիճուկ ,	Հատ	11000	66000	6	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32		*Դեղորայքի և ախտորոշիչ նյութերի ձեռք բերումը Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 25.12.2020թ*

		թեսթ հավաքածու 5 x 100մլ տուփ 6 հատ x /5 x 100մլ/		պլազմա: պահպանման պայմանները ռեակտիվները 2-8°C: Հանձնելու պահին պահպանման ժամկետի ½ առկայություն: Սերտիֆիկատ ISO 15189 և ISO 9001 Forin Vitro Diagnosticony*							
67	33211300	Կալցիում թեսթ հավաքածու / եվրոպական արտադրության կամ համարժեք/ 2x100 մլ տուփ 5 հատ x / 2 x 100 / մլ		Կալցիումի որոշման թեստ հավաքածու , մեթոդ՝ կոլոմետրիկ: Ալիքի երկարությունը 600նմ, ֆորմատ 2x100մլ: ստուգվող նմուշ արյան շիճուկ-պլազմա: պահպանման պայմանները՝ Ռեակտիվները 2-8°C Հանձնելու պահին պահպանման ժամկետի ½ առկայություն: Սերտիֆիկատ ISO 9001 և ISO 15189 Forin Vitro Diagnosticony*	Հատ	3200	16000	5	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32		*Դեղորայքի և ախտորոշիչ նյութերի ձեռք բերումը Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 25.12.2020թ*
68	33211160	Կրեատինին (թեսթ հավաքածու) / եվրոպական արտադրության կամ համարժեք/4 x 100մլ տուփ 10 հատ x / 4 x 100 / մլ		Կրեատինինի որոշման թեստ հավաքածու Մեթոդ՝ կինետիկ, կինետիկ: Ալիքի երկարությունը 510նմ:Ֆորմատ ոչ ավել քան 4 x 100 մլ Ստուգվող նմուշ՝արյան շիճուկ , պլազմա: պահպանման	Հատ	4000	40000	10	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32		*Դեղորայքի և ախտորոշիչ նյութերի ձեռք բերումը Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 25.12.2020թ*

				պայմանները ռեակտիվները 2-25°C Հանձնելու պահին պահպանման ժամկետի ½ առկայություն: Սերտիֆիկատ ISO 9001 և ISO 15189 Forin Vitro Diagnosticony*							
							367900				

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

*** Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:*

**** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

*****Ապրանքի մատակարարումը պետք է կատարվի պատվերի սահմաններում,*

******Ապրանքի մատակարարումը ք. Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32 հասցեում*

******* Ապրանքը պետք է լինի չօգտագործված:*

****** Տեխնիկական բնութագրերում առևտրային նշանին, ֆիրմային անվանման, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ արտադրողին կատարված հղումների հետ միասին հասկանալ «կամ համարժեքը» բառերը:*

Պիտանելիության ժամկետները համաձայն ՀՀ Կառավարության 02.05. 2013 թ. Թիվ 502.-Ն
Ա. 2.5 տարի և ավելի պիտանելության ժամկետ ունեցող դեղերը հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 24 ամիս մնացորդային պիտանելության ժամկետ
Բ. նյութերի տեղափոխումը, պահեստավորումը և պահպանումը պետք է իրականացվի համաձայն ՀՀ ԱՆ նախարարի 2010թ. 17-Ն հրաման

64	33691162	Լաբորատոր ազդանյութեր և ռեագենտներ ԱԼԱՏ	FENOX Medical Solutions, ALAT, «Անալիզ Մեդ Պրոմ» ՍՊԸ	Մեթոդ՝ IFCC модифицированный, կինետիկ: Ֆորմատ: 4x100մլ+1x100մլ: Ալիքի երկարությունը՝ 340 նմ, 365նմ: Ստուգվող նմուշը՝ արյան շիճուկ/էդտա պլազմա/հեպարինացված պլազմա: Պահպանման պայմանները՝ 2-8°C: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: ISO 13485, ISO 9001:	Հատ	11000	66000	6	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	6	Դեղորայք և ախտորոշիչ նյութերի ձեռք բերումը Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
67	33211300	Կալցիում թեսթ հավաքածու	FENOX Medical Solutions, Կալցիում, «Անալիզ Մեդ Պրոմ» ՍՊԸ	Մեթոդ՝ ֆոտոմետրիկ, կոլորոմետրիկ: Ֆորմատ 2*100մլ+1*3մլ ստանդարտ: Ալիքի երկարությունը 570 նմ, 578նմ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: ISO 13485:	Հատ	3200	16000	5		5	
68	33211160	Կրեատինին (թեսթ հավաքածու)	FENOX Medical Solutions, Կրեատինին, «Անալիզ Մեդ Պրոմ» ՍՊԸ	Մեթոդ՝ ֆոտոմետրիկ, կինետիկ: Ֆորմատ: 2x100մլ+2x100մլ+ստանդարտ 1x3մլ: Ալիքի երկարությունը՝ 492նմ, 490-510 նմ: Ստուգվող նմուշը՝ արյան շիճուկ/մեզ: Պահպանման պայմանները՝ 15-25°C: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: ISO 13485:	Հատ	4000	40000	10		10	
							367900				

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

*** Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ: *** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

*****Ապրանքի մատակարարումը պետք է կատարվի պատվերի սահմաններում, *****Ապրանքի մատակարարումը ք. Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32 հասցեում*

******* Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Պիտանելիության ժամկետները համաձայն ՀՀ Կառավարության 02.05. 2013 թ. Թիվ 502.-Ն*

******* Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Պիտանելիության ժամկետները համաձայն ՀՀ Կառավարության 02.05. 2013 թ. Թիվ 502.-Ն*

Ա. 2.5 տարի և ավելի պիտանելության ժամկետ ունեցող դեղերը հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 24 ամիս մնացորդային պիտանելության ժամկետ

Բ. նյութերի տեղափոխումը, պահեստավորումը և պահպանումը պետք է իրականացվի համաձայն ՀՀ ԱՆ նախարարի 2010թ. 17-Ն հրաման

ԳՆՈՐԴ

«ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ., Պուրակային 32
Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ
220345140192000
03017721
Տնօրենի Ժ/Պ
Արմեն Հախվերդյան

/ստորագրություն/
Կ.S

29.09.2020

ՎԱՃԱՌՈՂ

«ԼԻՆԱՐԵ» ՍՊԸ
ք. Երևան, Նանսենի 7/43
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ՝ Խորհրդային մ/ճ
Հ/Հ 163078039498
ՀՎՀՀ 09212215
Տնօրեն Ա. Շեգունց

/ստորագրություն/
Կ.S

Հավելված
« 27 » մայիս 2020 թ. կնքված
ՀԲԿ -- ԳՀԱՊՁԲ -- 20 / 0302 -10 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ եռամսյակների,			
			2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	Ընդամենը
25,39,40,42,45,46,47,48,50,64,67,68		ԴԵՂՈՐԱՅՔ ԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱԽՏՈՐՈՇԻՉ ՆՅՈՒԹԵՐ	125000	250000	367900	367900

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:
** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ
«ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ., Պուրակային 32
Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ
220345140192000
03017721
Տնօրենի Ժ/Պ
Արմեն Հախվերդյան

29.09.2020

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ԼԻՆԱՐԵ» ՍՊԸ
ք. Երևան, Նանսենի 7/43
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ՝
Խորհրդային մ/ճ
Հ/Հ 163078039498
ՀՎՀՀ 09212215
Տնօրեն Ա. Շեգունց

/ստորագրություն/
Կ.Տ